ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի ուղերձը երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ

Սիրելի՛ երեխաներ, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ:

Հունիսի 1-ը մեր պետական տոնացույցում նշվում է որպես երեխաների տոն: Եվ դա պատահական չէ, քանզի երեխաների հանդեպ սերն ու հոգատարությունը մեր բոլորիս պարտքն է, եւ ընկալվում է իբրեւ ազգային առանձնահատուկ դրսեւորում:

Մենք՝ մեծերս, անում ենք հնարավորը, որպեսզի երեխաներին փոխանցվեն ընտանեկան ջերմությունն ու հոգատարությունը: Մեր նպատակն է, որ դուք ունենաք անհոգ մանկություն, արժանապատիվ ու բարեկեցիկ ապագա:

Սիրելի՛ երեխաներ, այս պայծառ ու լուսավոր օրվա կապակցությամբ մաղթում եմ ձեզ խաղաղություն ու անսահման երջանկություն: Թո՛ղ որ իրականություն դառնան ձեր բոլոր բարի ցանկություններն ու երազանքները: